ԳՐԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՍՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՐԸ

20-րդ դարասկզբի մեկուկես տասնամյակի արևմտահայ հասարակական, գրական, գեղագիտական շարժման մեջ առանցքային դեր էր կատարում ազգային ոգու որոնման, ժողովրդի բարոյական գիտակցության կազմակերպման, նրա հոգևոր վերածննդի և ինքնահաստատման գաղափարը:

1908թ. հուլիսի 11-ին Թուրքիայում պետական հեղաշրջում է կատարվում: Իշխանության գլուխ է անցնում «Երիտասարդ թուրքեր» բուրժուանացիոնալիստական կազմակերպությունը: Օսմանյան կայսրությունը հռչակվում է հանրապետություն: Ազատություն, հավասարություն, եղբայրություն լոզունգները սուլթան Համիդի երեսնամյա տիրապետության մղձավանջից հետո անզուսպ ցնծությամբ է ընդունվում ժողովրդի, հատկապես՝ երկրի ոչ թուրք բնակչության կողմից: Անակնկալ ազատությունը բուռն ոգևորություն է առաջ բերում հատկապես արևմտահայության շրջանում, այնքան բուռն, որ ընդամենը մի քանի ամիս անց տեղի ունեցած Ադանայի ջարդերը, թեև խորապես ցնցում են արևմտահայ կյանքը, այնուամենայնիվ, չեն կասեցնում ոգևորության ընդհանուր ալիքը: Մարդիկ շատ երկար էին սպասել ազատությանը և այժմ սարսափում էին հիասթափությունից:

Արևմտահայ գրական կյանքի ներքին հոսանքները, իհարկե, միանգամից չփոխեցին իրենց ուղղությունը: Միայն մամուլի ազատությունը այժմ հնարավորություն էր տալիս բացահայտ ու բարձրաձայն խոսել այն ամենի մասին, ինչ նախորդ տարիներին ասվում էին կիսաձայն, տողերի արանքում, հաճախ այլաբանաբար:

Արևմտահայ գրական կյանքի բեկման շրջանի ամենանշանակալից երևույթներից էր գրական ասուլիսների շարքը, որ կազմակերպում է Էսայան սանուց միությունը 1913թ. մարտ-հունիս ամիսներին: Ասուլիսների թեմա են դառնում Լևոն Շանթի «Հին աստվածները», Գրիգոր Զոհրապի նորավեպերը, Վարուժանի «Հեթանոս երգերը», Ռուբեն Զարդարյանի «Ցայգալույսը», Հովհաննես Սեթյանի բանաստեղծությունները, Սիամանթոյի «Ամբողջական գործը»: Ծրագրված էր հաջորդաբար քննարկել